



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԳ. 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՓԵՏՐՈՒԱՐ

ԶԱՊԵԼ

† 22 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1232

ԶԱՊԵԼ անունս որ հիմայ շատ մեր ազգի ընտանեաց մէջ անուշութեամբ կու ըսուի, աւելի անոյշ յիշատակներէ առաջ եկած է, և թերևս աւելի քան ուրիշ ազգաց՝ մեզի նուիրական եղած. կան անոնց մէջ այլ իզապել թագուհիք, բայց ոչ մի այնքան սիրելի և պաշտելի՝ որքան մերս Զապել, առաջինն այս անուամբ՝ ՚ի մէջ ազգակցացն. առաջին բարձր թագաւորական պատուովն, և առաջին գեղեցիկ վարուքն և սրբութեամբ. հռչակաւոր նաև քաղաքական կենաց դիպուածովք. և ինչպէս մէկ հատիկ Տիգրանուհի ՚ի մէջ Հայկազուն թագուհեաց մերոց, մէկ հատիկ Սաթինիկ կամ Ս. Աշխէն Արշակունեաց մէջ, կամ կատրամիդէ և խոս-

րովանոյշ ՚ի Բագրատունիս, Ռուբինեան հարստութեան մէջ այլ մէկ հատիկ Զապել թագուհի. մանաւանդ թէ բոլոր մեր ազգին պայազատաց մէջ սա մէկիկ թագաժառանգ աշխարհատիկինն, որ ոչ թագաւորի կին ըլլալովն՝ կոչեցաւ թագուհի, այլ իր ամուսինն իրմէ կոչեցաւ թագաւոր: Իրմէ առաջ օտար պատմիչք կու յիշեն, (և դրամն այլ կու վրկայէ) որ Երատոյ կամ Երանեակ անուամբ Հայոց իշխեցող թագուհի մը եղած է, Գրիստոսի յաշխարհ գալուն տարիները, իբրև կին և քոյր Տիգրանայ մը, բայց անունն և համբաւն իսկ անծանօթ է մնացեր իր ազգին:

Ա. Զապել իր տկար սեռով, փափուկ հասական, հեղուկ սրտովն, նոր թագաւորութեամբ ձևացեալ ազգի մը կէս ինքնազլուխ և պայազատօրէն վարող բերդատէր իշխանները միացնելու, և

1 Վայ մեր և Բ Զապել թագուհի, կին Օշի թագաւորի, քոյր Ամաւրեայ Վիւլինեան (Վիւլրոսի թագաւորուին), որ վախճանեցաւ յամի 1310:

Հայոց, մանաւանդ այնպիսի ժամանակի Հայոց՝ ազգավար ըլլալու, գրեթէ անկարելի անձ մը և բան մը կ'երևի, (եթէ ազգերնիս և պատմութիւննիս լաւ կուճանաչեմք) . և սակայն վերին ազգախնամ տեսչութիւնն, փորձ և կտրիճ իշխանի մը քաղաքագիտութիւն, և մեծ ու հասարակաց երախտաւոր ու պատկառելի թագաւորի մը (Լևոնի) կամք, որ զգեռարոյս դատրիկը կտակէր տիկին իր 3/4 տարի արեան քրտամբք խնամեալ ազգին և քսանամեայ պայծառացեալ թագաւորութեանն, կարողացուցին այս բանս . և եղաւ Չապել առիթ հանգստեան Հայոց նորաթագ հարբստութեանն, որպէս և իր անարատ վարքովն՝ ըստ անուանն ստուգարանութեան՝ Արտուճոյ հաւգիւտ (Էլի-սաբէթ՝ հրէարէն) : Մեր պատմութեան, և մանաւորապէս Ռուբինեանց միջոց, Չապել ազնիւ և գեղեցիկ գոհար մ'երևցաւ, բարձր գլխոյ և բարձր բաղդի մը սահմանուած . և իբրև այսպիսի գոհար, (եթէ կրնամ ըսել, լուսափայլ՝ գեռ չիբանուած իսկ, գեռնոր գտուած), անկարելի այլ էր որ բազմաց բաղձալի, ակնունելի և հակառակելի չըլլար . և կրնայ քաղաքական մտօք յարմարուիլ Չապելի վրայ՝ ինչ որ թէ՛ նոյն թէ սրբազան մտօք ըսաւ մեր հոգերգակ հայրապետն՝ Հռիփսիմէի համար .

« Ի վերայ միոյ պատուական մարգարտի խաղացին ցընծալով ամենայն (հեթանոսք) . Արեւմուտք՝ յարևելս ընթացեալ հասին Քարողէլ յայտնապէս ըզքնաղ տեսութիւնն : Լըւան թագաւորք եւ լըցան ինդութեամբ . Որսալ յանձն առին ըզգաղտնի մեծութիւնն . Պարգեւել իրերայ խոստանային բանիւք, եւ ծածուկ հնարիւք՝ գողանալ ի միմեանց » :

Չապելի այսպիսի բաղդի ենթակայ ըլլալը իմանալու համար՝ բաւական չէ գիտնալն որ Հայոց առաջին և անուանի թագաւորի մը դուստր է, և ոչ թէ միամօր դուստր այլ, կամ հրատարակեալ ժառանգ Լևոնի, այլ հարկաւոր է և գիտնալն թէ ի՞նչպէս այսպիսի մեծ ժառանգութեան սահմանեցաւ և ի՞նչպէս հասաւ ՚ի նոյն : Իր մեծասիրտ հեռատես

և խորադէտ հօրն գլխաւոր հոգոց և գործոց մէկն էր այս . Լևոն՝ ոչ միայն Ռուբինեան թագաւորութեան հեղինակն եղաւ, այլ և պահող, զօրացընող ու հռչակող հայրենի տէրութեանն . յորում յաջողեցաւ անհուն ջանքով, կտրըճութեամբ, երկայնմտութեամբ և բարակ մանած քաղաքագիտութեամբ մը՝ որով գերազանցեց քան զամենայն Հայպետս, և քան զչատս յազգապետաց օտարաց : Գիտես դու, Հայկակ, թէ իր նախորդքն ամբողջ դար մը սրչափ աշխատեցան իրենց բոյնը հաստատելու Տորոսի ժայռերուն վրայ, պաշտպանելով ՚ի Յունաց և ՚ի Սէլջուկեանց . սրչափ կուուեցան՝ յաղթուելով այլ յաղթելով այլ . գիտես՝ որ իր հօր Լևոնի հայրն՝ Ստեփանէ՛ Յունաց կրակով եռացուցած կատասյի մը մէջ խաչեցաւ (յամի 1164—1165) . գիտես որ իր հօրեղբօր (Թորոսի) որդին՝ Բ. Ռուբէն մանուկը, տէրութեան օրինաւոր ժառանգը՝ չարաչար սպաննեցին՝ Հայոց տունը քանդել փափագողք . գիտես՝ որ իր միւս հօրեղբայրն Մլեհ՝ Հայոց նախատինք և անման անզգամ մ'էր և բռնութեամբ յանիրաւի տիրեց կամ նուաճեց աշխարհքը իբրև տառն տարի . մինչև յետմահուն կրցաւ Լևոնի անդրանիկ եղբայրն՝ Ռուբէն Գ. պայազատել Հայոց պարսնութիւնը (1175), բայց ապահով մնալու համար կարօտ էր եղբօրը (Լևոնի) օգնականութեան . որ և ազատեց զՌուբէն Անտիոքայ դքսին ձեռքէն, որ խաբէութեամբ բռներ զնա և բանտեր էր . անոր համար Ռուբէն կրկին երախտապարտ առ Լևոն, իր տարածամ հիւանդութեամբ ծանրացած ատեն՝ կրօնաւորելով, անոր թողուց տիրական աթոռը (1186), և անոր հետ՝ արժանաւոր խրատներ տալով, չվստահանալու մեծամտութեամբ իր քաջութեանը և հանճարոյն վրայ, այլ և մեծ խոհեմութեամբ և բարեպաշտութեամբ քաղաքավարելու : Չանայ Լևոն այս ամեն ձիրքերը յարմարցընելու իրարու, և զըժուար պարագայից մէջ շատ անգամ յաջողեցաւ քան թէ սխալեցաւ :

Բ. Առաջին դժուարութիւնն՝ ի սկզբան տէրութեանն և գրեթէ մինչև ՚ի վերջն այլ, իր դրակից և համազօր Անտիոքայ դքսութեան կողմէն էր, որ ինչպէս իր եղբայրը դաւաճանեց՝ այսպէս իրեն այլ դարանէր. երկայն խաղեր խաղաց Ղևոն անոր հետ, և եթէ Եւրոպացւոց դաշնակցութեան ու երախտեաց պարտքը չունենար, և մանաւանդ պատկառանքն ՚ի սրբազան գահէն Հոովմայ, որոյ միջնորդութեամբ այլ իր թագը կամ դրօշն ընդուներ էր, թերևս բոլորովին զինուորական ուժովն վարուէր Անտիոքացւոց հետ. բայց հարկ էր երբեմն ուժով և աւելին խորագիտութեամբ վարուիլ: Այսու մտքը Ղևոնի առաջին խաղն կամ հնարքն եղաւ խնամենայն իր նախանձորդի կամ թշնամւոյն հետ, որ էր դուքսն Պեմունդ Գ. որոյ աներձագին դուստրը՝ Իզապելը՝ առաւ ՚ի կնութիւն (1189). իսկ անոր (Պեմունդի) որդւոյն Ռայիմոնտի՝ կամ Ռեմունդի՝ որ էր կոմս Դարապլուսի՝ կին տուաւ (1195) իր եղբոր (Ռուբինի) դուստրը՝ զԱլիծ, (որ այրի մնացեր էր ՚ի Հեթմոյ Սամնեցւոյ), և ասոնցմէ (յԱլիծայ և ՚ի Բայիմոնտէ) ծնաւ (1196) Ռեմունդ-Ռուբէն Բրինձն (իշխան), որ պիտի ըլլար օրինաւորապէս ժառանգ դքսութեան Անտիոքայ. և մայրենի արեամբն անկասկած և բարեկամ պիտի պահէր զՀայաստան: Բայց երբ հայրն Ռայիմոնտ տարաժամ մեռաւ (1200) և իր հնգամեայ որդին անուանեցաւ կոմս, անոր հօրեղբայրն Պեմունդ Գ. յափշտակեց ոչ միայն անոր իշխանութիւնը, այլ և իր խոֆած և ապշած հօրը աթոռը. (ապշութեանն համար ևe Bambe կ'անուանէին զնա.) բայց իրաւունքն և Ղևոն վճնտեցին զհայրանենդ գահասէրն, և դարձուցին ծերը յաթոռն. իսկ երբ սա քիչ ատենէն բնական մահուամբ մեռաւ (1201), որդին (Պեմունդ Գ.) նորէն իշխանութիւնը ձեռք ձգեց ընդդէմ իրաւանց Ռուբենի-Ռեմունտայ: Ահա այս բանիս համար գրեթէ քսան տարի հակառակութիւն և կռիւ էր Ղևոնի և Պեմունդի մէջ, և Անտիոքայ դքսութիւնն տակն

ու վրայ եղաւ. իրեք չորս անգամ առաւ Ղևոն զԱնտիոք և նստուց իր եղբոր թոռը. Անտիոքացիք երկպառակած՝ ումանք Ղևոնի՝ ոմանք Պեմունդի կուսակից կ'ըլլային. Լատինք բնականապէս աւելի այս ետքինիս կողմն էին, վախնալով որ չըլլայ թէ բոլոր երկիրն այլ Հայոց թագաւորին իշխանութեան տակ անցնի. մանաւանդ որ Ղևոն արու զաւակ չունելով՝ զՌուբէն անուաներ էր իրեն յաջորդ, և թագով այլ պսակեր էր զնա (1210). ասոնք մեծ օգնութիւն գտան իրենց՝ Հոովմայ սրբազան քահանայապետը. և թէ անոր նամակօք ու նուիրակօք, թէ պատրիարքօք Անտիոքայ և Երուսաղեմի, թէ ժողովքով յԱնտիոք և թէ բանադրանօք բռնադատէին ըզլևոն թողու զԱնտիոք ՚ի Պեմունդ. Ղևոն այլ դեսպաններով և նամակներով և իշխանական ուժով երկար տարիներ դիմացաւ, իր իրաւունքը և դաշնադրութիւնը պաշտպանելով. ինչուան որ ուրիշներն այլ ճանցան զՌուբէն օրինաւոր ժառանգ դքսութեան և բանադրանքը վերուցին ՚ի Ղևոնէ: — Այս բաներս գոնէ համառօտիւ հարկ է գիտնալ, լաւ հասկնալու համար Զապելի ապագայ բաղդը, որ կերպով մը այս անտիոքեան խնդիրներէն ծագեցաւ:

Ղևոն թէ իր ըրած ամուսնութեամբը և թէ Ռուբէնը որդեգրելով՝ որչափ որ Անտիոքայ մերձաւորեցաւ, այնչափ այլ ետքի տարիները իրեն զզուելի եղաւ այս մերձաւորութիւնը. և ամենէն աւելի իր կիսն եղաւ իր սրտին վիշտ, զոր թէպէտ և թերևս աւելի քաղաքական տեսութեամբ քան սրտին փափագանօքն առեր էր, թէպէտ և չէր ունեցած իրմէ իրեն նման կտրիճ զաւակ մը ժառանգ իր այնքան աշխատանք զըտած և պահած թագին, բայց նախախնամութեան կամօք վարելով, և ոչ շատ օտար կտրիճ մը (Ռուբէնը) իրեն յաջորդ ընտրելով՝ զոհութեամբ կ'ապրէր. սակայն երբ յետ իբր քսան տարուոյ (1206) կենակցութեանն ծանր ամբաստանութիւն լսեց թագուհւոյն վրայօք հաւատարիմ անձէ, թերևս իր ազնուա

կան չափէն այլ աւելի դուրս ելնելով և պատժելով զկիսն՝ բանտարգել ըրաւ 'ի վահկա բերդի. և անկէ ունեցած մատ զաշ աղջիկը՝ յանձնեց իր մօրը՝ Ռիթա տիկնոջ, որ դեռ ողջ էր, և որոյ անուամբ կոչեր էր դուստրն այլ: Մեր պատմիչք զսա միայն յիշեն զաւակ լեոնի. բայց օտարք անուանեն նաև զՍտեֆանիա՝ կամ Եսթեֆեմի (Estéphémie) տուած 'ի կնուծիւն քաջին Յովհաննու Պրիենայ՝ Երուսաղեմայ թագապահին կամ թագաւորին: Իզապելի վերջն ինչ եղաւ՝ անյայտ է. հաւանօրէն քանի մը տարիէն մեռաւ յարգելանին, և լեոն երկրորդ ամուսնութիւն ըրաւ, երթալով 'ի Կիպրոս առ (թագաւորն Հիւկ), որդին Սմաւրեայ, և առնելով (1210) 'ի կնուծիւն, հաւանութեամբ Ս. Պապին¹ ասոր մատաղ օրիորդը՝ Սիպիլ, որ էր ըստ մեր ժամանակագրին (Սմբատայ) « Կին իմաստուն և համեստ »: Ասկէ լեոնի ծերութեան ծիրանի ծաղիկ ընծայեցաւ մէկհատիկ աղջիկ մը, ՉԱՊԵՆ. որ թէ իր մօրը տարիքին նայելով և թէ իր անդրանկին (Գ. լեոնի) ծննդեանը թուականին, կ'երևի տարէգրին նշանակածին պէս, ծնած յամի 1216:

Գ. Չապել իր ծերունի հօրը խոնարհած արևուն յանկարծափայլ լոյս մը, նոր յոյս մը բերաւ: Սա նոյն տարին արդէն անգամ մ'այլ Անտիոքայ տիրեր և հաստատուեր էր գրիութէն. բայց երբ նա նորէն հալածուած 'ի Պեմունդայ դիմեց առ հայրագիր և պաշտպան իւր, լեոն արդէն ձանձրացեալ, ծերացեալ և հիւանդոտ, յայտնի տեսնելով որ եթէ Ռութէն ինքն իրեն կարող չէ աթոռը պահելու, անով Հայոց գահուն այլ փնասաբեր պիտի ըլլայ, ոչ միայն վերջի անգամ այլ (1219) չօգնեց անոր, այլ և մերժեց իր աթոռոյն յաջորդութենէն. կտակը փոխեց, և իր ստացուածոց ու թագին ժառանգ անուանեց, եւրոպական օրինաց հետեւելով՝ իր նորընծայ Չապել դստրիկը, իբրև նախախնամու-

¹ Բայնալտի: Յորմէ յայտ է որ առաջին կինն մեռած էր, և ոչ որպէս մէկն 'ի մերայոց կ'ըսէ՝ զայն թողով՝ զսա առաւ:

թենէ պարզեալ պայագատ մը: Իր վերջի տարիները երբ ձեռքի և ոտքի յօղացաւութեամբ տանջուելով՝ չէր կրնար կատարել իր քառասուն տարի ըրած առիւծական արշաւանքները, և ոչ արծուի պէս ճանկերը ձգել լեոնէ լեռ բերպէ բերդ՝ ընդարձակած երկրին սահմանակից հակառակորդաց վրայ, դեռ երբեմն մոնչալովը կը վախցընէր զանոնք. զօրքն և զօրավարները կու զրկէր կամ յօգնութիւն նեղելոց և կարօտելոց, կամ 'ի հալածել զթշնամին. և եթէ սա զօրացեալ զիրենները քչէր ու վտանգէր, լեոն երկաթի տեղ ոսկի ափռելով՝ կու հեռացընէր վտանգաւոր մերձաւորը և կ'ազատէր իր գերեալ զօրքն և իշխանները: Այսպէս այլ ըրաւ յամի 1217, երբ Իկոնիոնի Ազգէտտին Գէյքաուս սուլտանն պաշարեց զԿապան բերդն և գերեց լեոնի զլխաւոր զօրավարները, որ էին մեծ իշխանն և պայլն Սիր Ատան, և կոստանդին գունդատապալ (սպարապետ), իր (լեոնի) քեռուոյն որդին՝ Պապեոն բերդին տէրն՝ 'ի ցեղէ Հեթմեանց¹: լեոն գերեթափ ընելով զԱտան և զկոստանդին՝ բոլորովին երախտապարտ և անձնանուէր ըրաւ զանոնք. « զի լաւ է թագաւորի աղէկ ճորտ » պահել՝ քան զայլ հարստութիւն »²: Այսպիսի աղէկ և հաւատարիմ՝ ճորտերու վրայ վստահացեալ և զանոնք իր զաւակին խնամակալ կարգելով՝ իր գեռակայծ դստեր լոյսը պայծառացեալ կու տեսնէր. և իր ծանրացած սեցած թեւերուն վրայ թրթուացընելով այն ճերմակ փափուկ ձագը՝ կու յուսայր թէ անով նորոգուի իր արծուային մանկութիւնն այլ, անով կարենայ կամ նոր որսեր ընել կամ հինները պահել. միայն կու մնայր անոր արժանաւոր վարուծնեակ մը գտնել, արժանաւոր լծակից մը. որ թէ իր, թէ անոր, և թէ Հայոց

¹ Առաջին Հեթում՝ Սևաստոսի որդին Սմբատ՝ պապ էր թէ լեոնի թէ այս կոստանդինս, մէկուն՝ (լեոնի) իր Ռիթա աղջկան, մէկայլին՝ (կոստանդինի) իր Վասակ որդուին. ուրեմն լեոն և կոստանդին համեմատեալ էին, իրենց զաւակքն այլ (Չապել և Հեթում) լծակիցք եղան յետոյ:

² Սմբատ:

բաղդը հաստատէ: Բայց Չապել շատ դեռաբուսիկ էր. Լևոնի յողացան այլ չէր յուսացրններ զնա չափահաս տեսնելու. սակայն անոր համար այլ աւելի կու հոգայր կու մտածէր. և իր անգին գոհարը (գուստրը) գգուելով՝ միտքը պալատէ պալատ արքունիքէ արքունիք կ'երթար, Չապելի փեսայ, Հայոց իշխան և իրեն գահակալ մը գտնելու՝ մինչ դեռ այն հոգած մտաց վրայ և յօգնած ձեռաց մէջ Չապել անհոգ և անգէտ կու ծաղկէր կու ծիծաղէր, կու բացուէր գոցուէր, ժայռերու և հեղեղի եզերք բուսած նունուֆարի մը պէս:

Սուլտանին 'ի կիւլիկիա ասպատակած տարին (1217) յերուզիոյ բազմութիւն խաչակիր զօրաց եկան նորէն գերուսաղէմ՝ ազատելու՝ յետ երեսնամեայ գերութեանն 'ի Սալահատտինայ. Լևոն անձամբ չկարենալով երթալ՝ զօրք տուաւ իր աներձաղին՝ կիպրոսի Հիւկ թագաւորին, որ և գնաց 'ի Թափոր և 'ի Պտղոմայիս, և խաչակրաց կանուխ հասած գնդից հետ քաջութեամբ գործ տեսաւ. այս յառաջապահ գնդից գլխաւորն և ամենէն կտրիճ իշխանն էր Ունկարաց թագաւորն Անդրէաս Բ. որ մեծ համբաւ այլ հանեց. բայց իր երկրին շփոթութեանը համար ստիպուեցաւ շուտով հոն փութալու. և 'ի դարձին եկաւ յԱնտիոք, որ այս ատենս այլ Ռուբենի ձեռքն եղած կ'երևի. Լևոն՝ որ ամեն բան կու զիտէր կ'իմանար, դեսպան խաւրեց առ Անդրէաս հաւատարիմ անձ, և զաչամբք խօսեցան որ անոր համանուն որդին Անդրէասը՝ պտակեն Չապելի հետ. թէպէտ և դեռ երկուքն այլ բաւական տարիք չունէին, վասն զի Անդրէաս այլ հազիւ 8 տարուան կրնար ըլլալ: Ունկարաց հին արևելեան արիւնը յարմարագոյն սեպեց Լևոն իրենին հետ խառնել. անոնց թագաւորին այլ ասկէ հաճոյ անակնկալ օժիտ չէր կրնար ըլլալ իր որդւոյն համար, զոր յանկարծ Հայոց թագաւոր պիտի տեսնէր: Այս բանիս համար գոհութեամբ թուղթ մը գրեց ('ի մարտի 1219 տարւոյ) առ պապն Ռոմիոս, իմացընելով Լևոնի հետ

ըրած խնամխօսութիւնը, և տնօրինումն ինդրելով որդւոյն համար, միանգամայն և աղաչելով որ ինքն քահանայապետն յանձնէ զնա Տաճարական և Ռապիթայի տապետաց՝ խնամակալ ըլլալու տղային՝ յետ մահուան Լևոնի: Բայց այս գործս չյաջողեցաւ. վասն զի Լևոն շուտով մեռաւ նոյն տարին (1219). և Անդրէաս թագաւորն զբաղած էր 'ի կալիցիա՝ հոն թագաւորեցընելու իր երկրորդ որդին. և ինչուան որ հոս բաները ուղղեց, Հայք ուրիշ ընկեր գտան Չապելի. մանուկն Անդրէաս այլ ոչ զնա կրցաւ առնուլ և ոչ Բութենաց դքսին դուստրը, զոր յետոյ խօսեր էր հայրն իրեն համար, այլ վենետիկցի մը առնելու բաղդ ունեցաւ: Այսպէս յօդ ելաւ Չապելի առաջին փափագողին ակնկալութիւնը. թէպէտ և կ'երևի թէ Լևոն այլ նոյն յուսով մեռաւ, նորէն յանձնելով զՉապել՝ կաթուղիկոսին և իր հաւատարիմ իշխանաց, և գլխաւորապէս Ատանին, զոր և Պայլ դրեր էր, այսինքն իբր խնամակալ տէրութեանն և հայրագլուխ (աթարէկ) իր դեռահասակ ժառանգին:

Դ. Չապելի խնամակալութեան տակ եղած ժամանակն՝ որ եօթն ութ տարի քշեց, շատ դժուարակնճիւռն եղաւ, և իրեն փոքրիկ սրտին այլ ոչ փոքր վախեր և ցաւեր բերաւ. որոց առաջինն եղաւ կորուսանելն իր հայրագիրը, որուն ձեռքէն հազիւ վարժեր էր հայրական խնամք ընդունիլ. Ատան պայլ օր մը Սայ Ս. Պարսամ եկեղեցին երթալու ատեն շատ չբանուկ ճամբէ մը իսմայելացւոց կամ Հաշիշի աւազակաց սրի տակ ընկաւ, որոց սատանայական պաշտօնն էր յանկարծ հասնիլ իշխողաց վրայ և ըստ պաննել. Ատան՝ Լևոնի հազարապետն և երբեմն սպարապետն ըլլալով՝ անշուշտ այլազգեաց ատելի էր: — Իշխանք Հայոց անոր տեղ հաւանեցան Պայլ ճանչնալու Լևոնի համիրակը, զերստանդին գունդատապն, զոր արդէն երկրորդ խնամակալ դրեր էր Լևոն. այս անձս որ 50 տարւոյ չափ Ռուբինեան տէրութեան նեցուկ և գրեթէ կառա-

վար եղաւ՝ այս ժամանակիս ամենէն նը-
 շանաւոր անձն էր, ամենայն բարեմաս-
 նութեամբք . և յետ Լեոնի մեծի՝ առա-
 ջին մեծ մարդ կրնայ ըսուիլ բոլոր մը-
 նացեալ տէրութեան ժամանակին . ցե-
 ղով, ինչպէս առաջ յիշեցի, 'ի Հեթ-
 մեանց էր, որ թշնամիք էին Ռուբինեան
 տանը՝ բայց սա ցեղին կրսեր ճիւղէն
 էր, որոյ անդրանիկն Տարսոնի և Լամ-
 բրոնի տէր ըլլալով՝ հակառակէր Ռու-
 բինեանց, իսկ այս ճիւղս Պապեռոնի և
 ուրիշ բերդերու ժառանգ՝ Լեոնի հօր
 հետ խնամութեամբ՝ միաբան և հաւա-
 տարիմ եղաւ Ռուբինեանց . կոստանդ-
 նի անձնական արդիւնքն այլ հասուց
 զինքը այս բարձր աստիճանին, ուր կրը-
 ցաւ այլ ամուր և փառաւոր կենալ հնա-
 րագէտ խեղճոյն, զօրութեամբն և բարե-
 կիրթ որդւոց օգնութեամբ: Այսպիսի
 զօրաւոր և բանգէտ անձի մը դէմ՝ կե-
 նալ կամ հնարել՝ շատ դժուար էր . և
 ով որ փորձեց՝ մեծապէս փասեցաւ .
 և նախ Բրինձն Ռուբէն-Ռեմոնտ:

Հալածուած յԱնտիոքայ, մերժուած
 իր բազմերախտ մեծ քեռիէն, մինչդեռ
 տարակուսեալ կու մտածէր՝ վրայ հա-
 սաւ Լեոնի և յետոյ Ատանայ մահն .
 Ռուբէն՝ մէկ իշխանութենէ զրկուած՝
 աչքը երկուքի դարձուց, որոց ատենօք
 իրաւամբ այլ կրնար յուսալ . իսկ հի-
 մայ թէ ոչ զօրութեամբ հին կտակին
 Լեոնի՝ գոնէ ազգականութեամբն և խը-
 նամութեամբ, (վասն զի Զապելի մօր-
 քոյրն էր իր կինն այլ), և Հայոց ու Լա-
 տինաց լեզուին և սովորութեան վար-
 ժութեամբն՝ վստահացաւ խնդրելու
 Հայոց թագաւորութիւնը . բայց Լեոնի
 կամբն և կոստանդնի վախն հեռացու-
 ցին զնա . սակայն տարաբաղդ երիտա-
 սարդն՝ չէր կրնար շուտով մոռնալ որ
 տասն տարի առաջ Լեոնի հետ թագա-
 կից և ձիակից Հայոց հանդիսական օտ-
 նից հաղորդ կ'ըլլար, և շատեր կային՝
 որ ոչ միայն զինքը ճանչցեր էին յաջորդ
 Լեոնի, այլ թերևս և հիմայ այլ չհա-
 կառակէին . այն ատեն՝ դեռ պատա-
 նեակ, հիմայ 25 տարուան կտրիճ աս-
 պետ մը, Հայոց և Անտիոքայ և խաչա-

կրաց նշաններով զարդարուած, իր ա-
 մենէն վառվռուն և յուսագին կենաց ա-
 տեն, չէր կրնար յայնպիսի մեծ փա-
 փազէ մը ետ դարձնել սիրտը . խընդ-
 րանօք չկրցածը ուզեց ուրիշ հնարքով,
 նաև զինուց զօրութեամբ՝ փորձել: —
 Այն ատեն (1219-20) խաչակիրք ա-
 ռաջնորդութեամբ Յովհաննու Պրիենայ՝
 Երուսաղեմի թագաւորին՝ եկեր պաշա-
 րեր և առեր էին զՏամրադ . հոն էր Պա-
 պին նուիրակն այլ՝ Պելագիոս ծիրանա-
 ւորն, որ իբրև փոխանորդ քահանայա-
 պետին՝ կ'ուզէր խաչակրաց գլուխ այլ
 սեպուիլ և հրամայել: Ասոր զիմեց Ռու-
 բէն, և գտաւ օգնութիւն ստակի և զօ-
 րաց . խաչակիրք Տամրադայ առման
 վրայ մեծամտած և շփացած անհոգ կե-
 ցեր էին . դիւրին էր ասոնցմէ ժողովել
 գունդ մը բաղդախնդրաց, և նոր տեղի
 մը ձեռք ձգել: Այսպէս այլ եղաւ . Ռու-
 բէն յանկարծուց զնորոյն եկաւ 'ի կիւ-
 լիկիա, մտաւ 'ի Տարսոն, և առանց ընդ-
 դիմութիւն գտնելու հոն, (ուր միշտ
 Լեոնի ցեղին հետ սերտ բարեմտութիւն
 չէր եղած), իշխեց ինքզինքը Հայոց թա-
 գաժառանգ անուանել, և գտաւ կուսա-
 կից այլ զինքն այնպէս ճանչցրնելու .
 քաջակերուած առաջ անցաւ՝ ձեռք ձգե-
 լու ուրիշ քաղաքաց և Լեոնի թագին
 վրայ . բայց զգաստն կոստանդին հաւա-
 տարիմ զնորով մը յանկարծ վրան հա-
 սաւ Մամեստիոյ կողմերը, անոր կուսա-
 կիցները ջարդեց ցրուեց, զինքը բռնեց
 բերաւ իրեն ապաստան կարծած Տար-
 սոն քաղաքը, և շղթայակապ բանտար-
 գել ըրաւ: Թշուառ երիտասարդն ան-
 յոյս 'ի Հայոց և յԱնտիոքայ, դեռ կու
 յուսայր խաչակրաց և Ս . Քահանայա-
 պետին օգնութեանը . և սա յիրաւի հայ-
 րաբար խնամելով և ճանչնալով զնա օ-
 ըրինաւոր տէր Անտիոքայ՝ գրով յանձ-
 նեց առ նախայիշեալ նուիրակն՝ որ հոգ
 տանի անոր ազատութեան, և երեսի
 վրայ չթողու անոր կինը և երկու աղ-
 ջիկները . նուիրակն կրցած ջանքն ըրաւ,
 նզովեց զԱնտիոքայ բռնաւոր դուքսը, և
 Տաճարական ասպետաց յանձնեց առ-
 նուլ քաղաքը . որով թերևս յոյս ըլլար

Ռուբենի գոնէ նորէն հոն դառնալու . բայց նա ողբերգական վախճան մ'ունեցաւ . բանտին, և աւելի սրտին նեղութենէն երկու իրեք տարիէն՝ իր դալար արևոջն ու ամեն յոյսերովն մարեցաւ մեռաւ¹ : — Հայոց թագն իրեն համար չէր, և ոչ այլ իրեն պէս ուրիշ մերձաժառանգ ակնկալուի մը, թէ և աւելի այլ արժանաւոր անձն :

Այս երկրորդ կամ երրորդ (յետ Անդրէի և Ռուբենի) ակնկալուն եղաւ նախայիշեալ թագաւորն Երուսաղեմի Յովհաննէս, պատճառաւ կնոջն խնամութեան . այս կտրիճ, զգօն և արդէն տարիքն առած մարդն, որ մեծ անուն ունէր Եւրոպացոց առջև, և դեռ նոր Տամիաղն առնելով՝ ալ աւելի հռչակուած էր, ժամանակին բաղդախնդիր, նաև բաղդակորոյս և բաղդագիւտ գլխաւոր անձն այլ կրնայ ըսուիլ . և ըստ այսմ՝ քաջութիւնն և ուրիշ ձիրքերն կու մըթանան : Լսելով Լևոնի մահը և Ռուբենի հանդիպածը՝ իրեն յարմար սեպեց ժառանգութիւնը . այս մտքով ելաւ Տամիաղէն եկաւ ՚ի Պտղոմայիս (Ա.ք.քեա), ու պահանջեց Հայոց թագը : Այսպիսի մեծ և զօրաւոր անձի դէմ կենալն դիւրին չէր . բայց որովհետև կնոջն իրաւամբք եկեր էր, կոստանդին այլ նովին իրաւամբ պահանջեց իրմէ՝ որ զկինը բերէ . Յովհաննէս զարձաւ իր կարծեցեալ թագաժառանգին՝ և հիւանդ գըտաւ, որ և քիչ ատենէ մեռաւ . 15 օր վերջը իր մէկհատիկ չորս տարուան մանչն այլ մեռաւ : Յոհաննիսի հայկական ակնկալութիւնն այլ փճացաւ . անոր վրայ շատ չանցաւ՝ Երուսաղեմի թագաւորութիւնն այլ կորոյս, և անոնց տեղ գտաւ կոստանդնուպոլսոյ կայսրութիւնը (1234), ու յունական թագով մխիթարուած մեռաւ (1237) :

Ե. Զապել՝ առանց իր գիտնալուն այս յափշտակիչներէն ազատելով, պէտք էր որ շուտով ապահովուէր նոր ակրնկալուներէ այլ . և թէպէտ կոստանդին

¹ Ըստ ոմանց պատերազմի մէջ բռնուած ատեն ՚ի Տարսն բերուելով սպաննուեցաւ կամ՝ ի Բարձր բերդ բանտեալ մեռաւ :

ամենայն արթնութեամբ կու հսկէր, բայց երկար տարիներ այլ անխռով մընալու չէր յուսայր . ուստի Զապելի չափահաս տարիքին չկարենալով սպասել, գոնէ խելահասութիւնը տեսնելով, երբ եօթն տարեկան եղաւ՝ ՚ի ժողով կանչեց ազգին զլխաւոր իշխանները, պաշտօնեայքը, զօրապետները և եկեղեցականքը, և ըսաւ, (ըստ պատմելոյ իր որդւոյն՝ Սմբատայ սպարապետի և տարէգրի.) « Պարոնայք, դուք զիտէք » թէ յինչ նեղութեան գտի զաշխարհս » ու զմեր Պարոնին (Լևոնի) յետամնաց » քըն . ու Ասատուծով ինչու ՚ի յայս բերի . » ու մեր Պարոնի դուստրս՝ կարգման ե » դաւ . ամենդ թատալիրուեցէք (պատ » ըստտուեցէք) որ մեզ պարոն բերեմք . » զի ես ուզեմ որ իմ տան և իմ որդւոցն » անդորրութիւն առնեմ » . այսինքն, Զապելի փեսայ մը բերեմք՝ որ ես պայլութեան հոգէն ազատած՝ իմ տունս հոգամ : « Նա ամենն թատալիրուեցան » շատ օրեր . և հայնց պատեհեցին (պատ » շած տեսան) որ քան յայլ տեղայ՝ բե » ընն պարոն Ալոզին զԱնապայ Բրըն » ձին որդին՝ զՖիլիպն . զի ՚ի մօտս է, » և լաւ կարէ օգնել մեզ ՚ի մեր ամեն » կարիք » : — Այս Անտիոքայ Բրինձն կամ իշխանն էր ծանօթ Պեմուռդ (կամ ըստ ոմանց Բեմուռդ) Դ. Շիլ կամ միականի կոչուած¹ (Le Borgne), որ այնչափ վիճից պատճառ եղաւ ընդ Լևոնի և իր եղբորորդւոյն՝ Ռուբենի . ՚ի վերայ այսր ամենայնի մեր պարոնայքն շատ օրեր մտածելով քան զամենքն պատեհ գտան իրենց պարոն բերելու անոր երրորդ որդին՝ Փիլիպպոսը, որ իբրև 17 տարուան պատանի մ'էր . և արդէն մօր կողմանէ խնամի էր Հայոց և տեղեակ անոնց սովորութեանց . կու յուսային որ իր հօր և հանգուցեալ աներոջ մէջ անցածները զիտելով՝ իրենց զիջողութեանը վրայ երախտապարտ ըլլայ, և հլու հաւատարիմ մնայ իր նոր հայրենեաց օրինաց : Այս բանս ապահովելու հա-

¹ Արդեօք այս նշանակութեամբ Ալոզ կամ Ալօզ կոչէ զնա մեր պատմին, թէ այլ պատճառաւ չեմ գիտեր :

մարհաւատարմութեան խօսք և երդումն այլ պահանջեցին իրմէ . « Բերին 'ի պո . » ման (պայման) որ հայեկակ կեկայր , » ոչ գեկեղեցիկ և գսեղանկ հայեկակ » տանէր . և զամեն մարդ յիւր իրա . » ւունքն պահէր » : Այսինքն , թէ եկեղեցական և թէ արքունական հանդէսները հայկական ծիսով վարէ , և զամենքն իրենց իշխանութեան և իրաւանց մէջ պահէ : Ապա (1222) մեծ հանդիսիւ պրսակեցին անոր հետ զօրիորդն Զապել , որ իբրև քոյրահարսն փեսային և թագուհի Հայոց և միամիտ աղանի՝ չորս տարի այլ հօրը արքունի դարպասին և առագաստին մէջ կու ճեմէր , զեռ իր խնամակալ և հայրանախանձ Հայ իշխանաց հսկողութեան տակ . և շատբարեաղջ եղաւ ընտիր դաստիարակներ ունենալու թէ յիւրոցն և թէ 'ի փրանկաց՝ միտքը և հոգին կրթելու . և իր բարձր վիճակին յարմար ստացաւ 'ի կուսական հասակին՝ սիրտ մայրենի՝ աղքատաց և կարօտելոց համար , ճաշակ և սէր իմաստութեան և զիտութեանց , և ամենէն աւելի բարեպաշտութիւն , համեստութիւն և աստուած սիրութիւն : Աշխարհն՝ իրեն տիկնութեան , փեսայն՝ հարսնութեան , երկինք՝ ազգին մայրութեան կու պատրաստէին զնա . ինքն զեռ արտաքին փառաց անհմուտ՝ միայն պարկեշտութիւնը զիտէր գեղեցկագոյն զարդ . և կարծէր թէ այնպէս կուսախառն կենակրցութեամբ ապահով պիտի մնայ իր պրակակցին հետ :

Բայց թէ իր և թէ հասարակաց կարծիքն խաբուեցաւ : Փեսայն փիլիպ յառաջ քան առ հարսնն՝ անարժան զրուեցաւ առ աշխարհն՝ որոյ թագովն պատուեր էր : Առջի իրեք տարին վախով և զգուշութեամբ քաղաքավարելով՝ երբ ուժովցաւ քանամեան եռանդով և համարձակութեամբ՝ սկսաւ իր խելքովն վարուիլ , մանաւանդ թէ հօրը խելքովն , որ ոչ այնքան որդեսիրութեամբ՝ որքան շահասիրութեամբ՝ պղտորեց անոր միտքը . և սկսաւ սա պաղիլ Հայոց սովորութենէն , և « իւր հօրն թապտրով

» կ'ուզէր որ ձգէր զՀայոց զամեն իշխանքն , և յիւրոցն զնէր » . Հայ պաշտօնէից տեղ՝ փրանկ մտցընել , եկեղեցւոյն և սեղանին ծէսը փոխել . Միսէն աւելի Անտիոքայ մօտենալ : իշխանքն խրատեցին զնա , բայց նա իր հօրմէն մուրրած՝ ոչ միայն ճամբէն չդարձաւ , այլ և զաղտուկ հօրը խաւրեց Հայոց արքունի զարդերն , և մանաւանդ Լևոնի մեծածախ շինած պալատաձև վրանը , որ մեծ հանդիսի օրեր կու կանգնէին : Եւ ոչ այնքան երգմունքէն՝ որքան Հայոց վրէժխնդրութենէն վախելով՝ ուզեց ինքզինքն այլ փախցընել իր հայրենիքը . զաղտուկ զԶապել հետն առած ճամբայ ելեր և հասեր էր 'ի Թիլ՝ Զահան կամ ճիհուն գետոյն քով . Հայոց իշխանքն այլ վրան հասան , բունեցին զնա և բերդարգել ըրին , իբրև մատնիչ ազգային իրաւանց և երդմնագանց . լուր խաւրեցին Անտիոքայ Բրնձին այլ որ յետ դարձընէ Հայոց գանձը , և զորդին ազատէ . իսկ շիլ և շուար հայրն՝ Հայոց ոսկին և արծաթը աւելի ընտրելով քան իր արեան սէրը , անհող եղաւ . փիլիպպոսի դալար արևն այլ բանտին մթութեան և տխրութեան մէջ մարեցաւ (1225) . 'ի պատիժ՝ իրմէ աւելի՝ իր անզգայ հօրը , 'ի վրէժ ազգային հայենակ իրաւանց , բայց . . . և 'ի փուշ փափուկ սրտին Զապելի . որ հիմայ զարգացեալ սկսեր էր զգալ իր վիճակը և պարտքերը , և աչքին զիմաց սարսափելով տեսեր էր իր ընկերը՝ զինեալ և զայրացեալ մարդկան ձեռք ընկած . եթէ ազգին իրաւանց դպչողին չէր կրնար պաշտպան կենալ , միթէ իր կենակցին և թագակցին բարեխօս ըլլալու իրաւունք չունէր : Կ'իմանար որ իր տկար հասակն խաղալիկ կ'ըլլայ բաղդին և շատերու բաղդի , բայց ամեն փափագովն այլ չկարենալով իր աղանոց սահմանէն վեր թռչիլ՝ լռիկ սիրտը դրած դադրէր :

Զ . Ազգանախանձ պարոնայքն Հայոց երկրորդ անգամ պայլ զրին վերստանդին , որ փութացաւ փիլիպպոսի կողմնակից իշխանները ցրուել . և անոնցմէ 28 , կամ ըստ ոմանց 70 հոգի բունեց ,

կամ սպաննեց կամ վռնտեց կամ նր-
 ւածեց : Տարի մ'այլ արթնութեամբ կա-
 ուավարելէն ետև՝ իր անուանակից կոս-
 տանդին կաթուղիկոսը և մեծ իշխան-
 ներէն մէկ քանին հաւանեցուց որ Զա-
 պելը հարսնացընէ իր որդւոց մէկուն ,
 որպէս զի ինքն այլ հայրաբար պաշտ-
 պանելով՝ ամեն փորձանքէ ազատ պա-
 հէ զթագն և զթագուհին Հայոց : Եթէ
 իր փառասիրութենէ ազատ այլ չէր
 այս խորհուրդս , սակայն իրմէ արժա-
 նաւոր մարդ այլ չկար Զապելի սկես-
 րայր ըլլալու . ոչ որ իշխեց ձայն հանե-
 լու , և ոչ որ յետոյ զղջացաւ : Ինքն լևոնի
 համբիրակ , որդիքն այլ նոյնպէս էին
 Զապելի և գրեթէ մէկտեղ մեծցած . ա-
 սոնցմէ փեսայացուն էր Հեքոււմ , եր-
 րորդ որդին կոստանդինի , իբրև 15 տա-
 րեկան¹ , « Մանուկ տիգր , առոյգ մար-
 » մնով և գեղեցիկ տեսանելով » . ըստ ա-
 սելոյ ժամանակակից պատմիչին , (կիրա-
 կոսի) , և ըստ ականատեսին (վարդա-
 նայ) « մեծահոգի և հանճարեղ պատա-
 » նեակ , որ էր անձնեայ և թիկնեղ և
 » գեղեցկազիտակ երիտասարդ » : Այս
 վայելուչ և հաճոյական ձիւրքերն եթէ
 օտարաց անտարակոյս գրաւ մ'էին աշ-
 խարհքին խաղաղութեանը և իրենց
 տիկնոջ երջանկութեանը , սակայն ասոր
 մեծ և զգայուն սրտէն չիկրցան խլել
 Փիլիպի փուշը . որչափ այլ երախտաւոր
 ճանչնար իր կրկին անգամ հայրազուխ
 եղած կոստանդինը՝ Զապել կ'իմանար
 որ ոչ միայն անոր թւոց տակն է՝ այլ
 կերպով մը և ճանկերուն . և այս ճան-
 կերը շատ սուր և արիւնոտ կ'երևէին ի-
 րեն . Հեթում մ'այլ սիրուն ձագ մը՝ բայց
 բազէի կամ արծուոյ ձագ էր . Զապել
 որսերէ զգուած՝ անխուով խաղաղու-
 թեան բոյնի մը կու փափագէր . կ'ու-
 զէր մէկ ուժով մը զինքը բազէի և արծ-
 ւոյ չհասած բարձրութեան ծոցը ձգել ,
 ու մնայք բարով ըսել թէ հարսնու-
 թեան և թէ թագաւորութեան պսա-
 կին . որոյ համար կու սեպէր երկու կըտ-

¹ Իր անդրանիկ եղբայրն Սմբատ ծնած էր յա-
 մին 1208 :

րիճներու՝ և իրեն մէկմէկէ մերձաւոր-
 ներու՝ կարճ օրով ու սև սգով ցաւալի
 մահերը : Մտածածը մեծ և յօժար ,
 բայց 'ի գործ ածելն էր դժար . պայլ ,
 պարոն , իշխանք և եպիսկոպոսք յորդո-
 բէին զնա 'ի կենակցութիւն Հեթմոյ և
 'ի տիկնութիւն . ինքն իբրև անօգնական
 աղաւեսակ և որոջ մնչէր մայէր , լայր
 ու լուէր : — Կամայ ակամայ նշանելով
 զնա ընդ պատանւոյն (1226) , թողին
 որ ժամանակն այլ յորդորէ զսիրտ դըշ-
 խոյին , և ապա մեծահանդէս կատարեն
 թագօրհնէքը :

Այն միջոցին սրբասէր աղաւնին սըր-
 տին միամտութեան հետ հոգւոյ խորա-
 գիտութիւն միացնելով՝ ուզեց որ եր-
 թայ մայրը տեսնէ . թողուցին իշխանքն ,
 յուսալով որ սիրան այլ բացուի և միտ-
 թարուած դառնայ : Մայրն՝ Իզապել՝
 կամ իր կամք , կամ Հայոց զգուշու-
 թեամբն քաշուեր էր 'ի Սելեկիա Իսաւ-
 րիոյ , և իր Փրանկ ազգականաց քով
 կենայր . այս ամուր բերդաքաղաքս՝
 որ կիւլիկիոյ արեւմտեան սահմանա-
 ծայրն է , լևոն տուեր էր լատինացի
 Հիւրական ասպետաց , որոնք մեծ պա-
 տուով և սպասաւորութեամբ ընդուներ
 և պահէին զայրի դշխոյն լևոնի . հիմայ
 անոր ժառանգ դուստրն այլ աւելի պա-
 տուով ընդունեցան . մանաւանդ երբ ի-
 մացան որ աղջիկ թագուհին չուզէր ան-
 կէ և մօրմէն բաժնուիլ , կամ անոր և
 ազգականաց խրատովն , կամ իր կա-
 մքն , և աւելի փափագի վանք մը քա-
 շուիլ՝ քան արքունեաց մէջ նազել , բեր-
 դին դռները ամրացուցին : կոստանդին
 զայս լսելուն պէս՝ կրակ կտրած զօրքե-
 ըր ժողովեց , հասաւ պաշարեց քաղա-
 քը . քաղաքապետն կամ գլխաւորն աս-
 պետաց Ֆրէր (եղբայր) Պերդրան՝ իր
 ասպետաց կտրըճութեան և բերդին ամ-
 րութեան վրայ վստահացած՝ դէմ կե-
 նայր Հայոց . կոստանդին չուզելով եր-
 կայն պաշարմամբ վտանգի ձգել բաղ-
 դը , սպառնացաւ Պերդրանայ՝ որ եթէ
 չուտով չտայ զԶապել , մէկէն երթայ
 Իկոնիոնի Ալայէտտին սուլտանին հետ
 դաշնակցելու , և անոր զօրքերն այլ ա-

ուած դայ բնաջինջ ընէ ասպետաց տու-
 նը տեղը: Պերդրան մէկ կողմէ վախնա-
 լով սպառնալիքէն, մէկայլ կողմէն այլ
 իր և իրեններուն պատուոյն և քաջու-
 թեան նախատինք սեպելով քաղաքը
 մատնել հակառակորդին, և անկէ ա-
 ւելի իր հիւրերը՝ հոն ապաւինեալ թա-
 դուհիները, ասպետական հնարագի-
 տութեամբ մը պատասխանեց կոստան,
 դեայ, թէ մենք ոչ կարողութիւն ու-
 նիմք ձեր դէմ կենալու քաղաքս պաշտ-
 պանելու, և ոչ այլ կրնամք մատնել.
 վասն զի բարեյիշատակ Լևոն թագա-
 ւոր մեզի տուած է, և հոս են իր կիներն և

դուստրն՝ ձեր թագաժառանգն, և հոս
 կ'ուզեն մնալ. ինչպէս կրնամք մենք
 համարձակիլ մեր բարերարները և մեզի
 դիմողները ձեր ձեռքը տալ իրենց կա-
 մաց դէմ: ուրեմն թողուցէք մեզի՝ որ
 մենք մեր կամօք դուրս ելլենք բերդէն,
 և դուք զիտցածնիդ ըրէք: Այս պայմա-
 նաւ ասպետքն իրենց պատուովն ելան
 թողուցին զՍելևկիա. կոստանդին նո-
 ղէն ձեռք ձգեց մօրը բունէն բռնած
 ձագի պէս՝ Չապելը, և հրաւիրեց ՚ի
 տիկնութիւն և ՚ի մայրութիւն Հայոց:

Կը շարունակուի:



Հ Ի Ն Ք Ն Ա Ր

Տաղ սրբոց վարդաւանսց.

Այսօր յոյժ ցընծան եկեղեցւոյ մանկունք .

Մայր սիովն որդւովք բերկրեալ՝

Պար առեալ տօնէ ըզձեր

Խնդութեամբ մեծաւ զհանդէս:

Հրաշալի ձայնիւ երգէ զհոգւոյ հընչմունս,

Խառնեալ ընդ երգս եւ զողբս:

Վարդան վանող չարին սպանող,

Վրկայ խաչելոյն մահուամբ:

Սիրով ձեր հարեալ վառեալ սըրտիւ տըրփիւ

Ըղձալի բաղձմամբ տօնէ: